Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ, 1989 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարը Գերագույն խորհրդին հանձնարարել էր ուսումնասիրել ԼՂԻՄ-ում տիրող իրադրությունը և հարցը քննարկել նստաշրջանում: Սակայն, նստաշրջանի աշխատանքի վերջին օրը՝ 1989 թվականի նոյեմբերի 28-ին, Գերագույն խորհրդի նիստում հանձնաժողովի եզրակացության հրապարակման ու քննարկման փոխարեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից ներկայացվեց որոշման նախագիծ, որը նախագահությունում չէր քննարկվել: Այդ նախագծին նախապես չէին ծանոթացվել նաև Գերագույն խորհրդի անդամները: Գերագույն խորհրդի նախագահությունը լիովին անտեսեց տեղում պրոբլեմն ուսումնասիրած հանձնաժողովի կարծիքը, պարտադրեց իր նախագիծն ու քննարկման իր սխեման: Ի նշան բողոքի, ինչպես հայտնի է, Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատները հարկադրված էին հեռանալ դահլիճից: Հայ ժողովուրդը չճանաչեց այդ որոշումը, որն իր արտացոլումը գտավ հայ ժողովրդի երկու մասերի վերամիավորման մասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման մեջ:

Գերագույն խորհրդի ընդունած հապճեպ որոշումը չհանգեցրեց լարվածության թուլացմանը ռեգիոնում, ավելին՝ իրադրությունը կտրուկ սրվեց: Հակառակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման, շրջափակումը այսօր էլ շարունակվում է: Ձեռն դադարեցվում վանդալիզմի ակտերը, ուժեղացել է հայ բնակչության բռնագաղթի հոսանքը:

Համոզված լինելով, որ դեպուտատների ճնշող մեծամասնությունը անաչառ ինֆորմացիա չի ստացել հարցի էության և ռեգիոնում տիրող իրադրության վերաբերյալ, Հայաստանի և ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունից պարզաբանումներ են պահանջում երկրի պառլամենտի գործունեության դեմոկրատական նորմաների և արարողակարգերի խախտման առթիվ: Հույս և վստահություն ենք հայտնում, որ համագումարը չեղյալ կհամարի Գերագույն խորհրդի սնանկ որոշումները և կձեռնարկի այնպիսի արջոցառումներ, որոնք կպարտավորեցնեն հարգել պառլամենտը:

Հայտարարությունը Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների հանձնարարությամբ հրապարակեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Հ. ԻԳԻԹՅԱՆԸ